

### 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

#### 3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների, դրամական բազան 2000թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 72390 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ այն աճել է 18537 մլն. դրամով կամ 34,4%-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ համապատասխանաբար՝ 6274 մլն. դրամով կամ 9,5%-ով:

2000թ. դեկտեմբերի վերջի դրությամբ դրամական զանգվածը կազմել է 151653<sup>1</sup> մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել է 42199 մլն. դրամով կամ 38,6%-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ համապատասխանաբար՝ 6419 մլն. դրամով կամ 4,4%-ով: Նախորդ ամսվա նկատմամբ նշված փոփոխությունը պայմանավորված է զուտ ներքին և զուտ արտաքին ակտիվների աճով համապատասխանաբար՝ 2385 և 4034 մլն. դրամով:

Դրամական զանգվածի աճը 2000թ. դեկտեմբեր ամսում ուղեկցվել է բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի և ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների աճով համապատասխանաբար՝ 16,8%-ով (8548 մլն. դրամով) և 0,4%-ով (306 մլն. դրամով), իսկ ցպահանջ դեպոզիտները նվազել են 17,0%-ով (2433 մլն. դրամով): Ընդ որում ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2000թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 52,9% և տարեսկզբի համեմատ աճել է 0,6 տոկոսային կետով:

#### Դրամական զանգվածն ըստ բաղադրատարրերի 2000թ.

(ամսվա վերջի դրությամբ, մլն. դրամ)

	1999թ.	2000թ.						
	դեկտեմբեր	հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
<b>Դրամական զանգված, ընդամենը</b>	109454	102822	111202	120371	129697	131514	145234	151653
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	x	93.9	105.8	107.4	102.4	101.4	110.4	104.4
տոկոսով ընդամենը այդ թվում՝	100	100	100	100	100	100	100	100
<b>Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ</b>	42610	34839	36639	39286	44158	45272	50939	59485
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	x	81.8	105.4	106.2	101.1	102.5	112.5	116.8
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	38.9	33.9	33.0	32.6	34.0	34.4	35.1	39.2
<b>Ցպահանջ դեպոզիտներ</b>	9617	11561	10606	11286	12689	12245	14342	11909
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	x	120.2	107.3	107.7	112.4	96.5	117.1	83.0
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	8.8	11.2	9.5	9.4	9.8	9.3	9.9	7.9
<b>Ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտներ</b>	57227	56422	63957	69799	72850	73997	79953	80259
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	x	98.6	105.8	108.1	101.5	101.6	108.0	100.4
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	52.3	54.9	57.5	58.0	56.2	56.3	55.0	52.9

ՀՀ ազգային արժույթով դրամական զանգվածը 2000թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 76879 մլն. դրամ (ներառյալ հաշվարկված տոկոսները), իսկ բանկերի կողմից ներգրավված արտարժույթով դեպոզիտները՝ 74774 մլն. դրամ: Ընդ որում, արտարժույթով դեպոզիտները 1999թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ աճել են 21750 մլն. դրամով կամ 41,0%-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 273 մլն. դրամով կամ 0,4%-ով: Արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2000թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 49,3% և 1999թ. դեկտեմբերի վերջի համեմատ աճել 0,9 տոկոսային կետով, իսկ 2000թ. նոյեմբերի վերջի համեմատ նվազել՝ 2,0 տոկոսային կետով:

1 Ընդգրկում է հաշվարկված տոկոսները:


**Դրամական զանգվածի կառուցվածքը**

(%-ով ընդամենի նկատմամբ)

	1999թ. դեկտեմբեր	2000թ.						
		հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
Դրամական զանգված	100	100	100	100	100	100	100	100
այդ թվում՝ ազգային արժույթով	51.6	49.5	47.7	46.4	47.0	47.8	48.7	50.7
արտարժույթով	48.4	50.5	52.3	53.6	53.0	52.2	51.3	49.3

**Դրամական զանգվածի տարրերի դինամիկան 2000թ. հունվար- դեկտեմբերին**

(նլն. դրամ)



Դրամական զանգվածի և բազայի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դրամական բազմարկիչը դեկտեմբերին հավասարվել է 2,1-ի:

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը<sup>1</sup> 2000թ. դեկտեմբերին ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվել է 25%, ինչը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 2 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի կողմից ներքին տնտեսության նկատմամբ պահանջները (դրամով և արտարժույթով) 2001թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 109319<sup>1</sup> մլն. դրամ և 2000թ. հունվարի 1-ի համեմատ աճել են 19192 մլն. դրամով կամ 21,3%-ով, իսկ 2000թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում նվազել են 107 մլն. դրամով կամ 0,1%-ով:

<sup>1</sup> ՀՀ ԿԲ կողմից նախկինում սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոխարեն ներկայումս սահմանվում են ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքներ, որոնցից ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքն իր բնույթով համապատասխանում է նախկին վերաֆինանսավորման տոկոսադրույքին:

<sup>1</sup> Ըղբրկված են հաշվարկված տոկոսները:

Առևտրային բանկերի վարկային ներդրումների դինամիկան

(մլն. դրամ)

	2000թ.						2001թ.
	1.01	1.04	1.07	1.10	1.11	1.12	1.01
<b>Վարկային ներդրումներ<sup>2</sup>, ընդամենը</b>	74397	80518	87838	94832	103004	94443	96992
<i>այդ թվում՝</i>							
կարճաժամկետ	41272	36588	42163	36166	39053	38102	39563
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	55.5	45.4	48.0	38.1	37.9	40.3	40.8
երկարաժամկետ	33125	43930	45675	58666	63951	56341	57429
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	44.5	54.6	52.0	61.9	62.1	59.7	59.2
որից՝ վարկեր տարադրամով	60630	68623	76794	82828	89521	80503	82267
<i>այդ թվում՝</i>							
կարճաժամկետ	32941	30740	37842	32771	34410	33653	34985
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	54.3	44.8	49.3	39.6	38.4	41.8	42.5
երկարաժամկետ	27689	37883	38952	50057	55111	46850	47282
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	45.7	55.2	50.7	60.4	61.6	58.2	57.5

2001թ. հունվարի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 10330 մլն. և 14652 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ երկարաձգված վարկերը աճել են 1779 մլն. դրամով կամ 20,8%-ով, իսկ ժամկետանց վարկերը համապատասխանաբար՝ 4722 մլն. դրամով կամ 47,6 %-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ երկարաձգված վարկերը նվազել են 1119 մլն. դրամով, իսկ ժամկետանց վարկերն աճել՝ 1194 մլն. դրամով:

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 16049 մլն. դրամով կամ 52,3%-ով և 2001թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել՝ 46734 մլն. դրամ, իսկ 2000թ. դեկտեմբերի 1-ի նկատմամբ աճել է 947 մլն. դրամով կամ 2,1%-ով:

Բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը 2000թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 393306, որից ֆիզիկական անձինք՝ 324182, իսկ նրանց հաշիվների քանակը համապատասխանաբար՝ 394149 և 304302: Ընդ որում, ներառված չեն միացյալ հաշիվներում ընդգրկված հաճախորդները և վերջիններիս հաշիվների քանակը:

2000թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 438894,2 մլն. դրամ (դեկտեմբերին՝ 53390,8 մլն. դրամ), իսկ ծախսերը՝ 455284,9 մլն. դրամ (դեկտեմբերին՝ 61739,1 մլն. դրամ): Ծախսերը գերազանցել են մուտքերի գումարը 16390,7 մլն. դրամով (դեկտեմբերին՝ 8348,3 մլն. դրամով): 2000թ. հունվար-դեկտեմբերին արտարժույթի վաճառքից մուտքերը կազմել են 129105,3 մլն. դրամ (դեկտեմբերին՝ 15970,9 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 115101,6 մլն. դրամ (դեկտեմբերին՝ 10383,6 մլն. դրամ): Արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը 14003,7 մլն. դրամով (դեկտեմբերին՝ 5587,3 մլն. դրամով):

<sup>2</sup> Ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը: